

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՄՇԱԿ

ՀԱՅԳԵՍԱՐԹԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առ շաբաթը).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ԲՈՒՄԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարենորոգութիւնների չեղումը.— Ներքին
Տեղական Թիֆլիս. Անդրերթովիսի գր-
նախաձեռնի օգտին. Միս իրաւունքը. Նախակ
Շուկայ. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— Հեռագրեր.—
ԾԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Ձանազան ճանապարհներից:

ԲԱՐԵՆՈՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇԵՄՔՈՒՄ

Մամուլի և հասարակութեան ամենա-
մեծ հետաքրքրութիւնը ներկայումս պը-
տուում է կրթական բարենորոգութիւն-
ների շուրջը: Թագաւոր Կայսրի բարձրա-
գոյն բարեհաճութիւնը կրթական գործի
բարեկարգութեան մասին լցրել է բոլորի
սրտերը հաստատ յայտնելով և ամենքը վը-
տահովեամբ սպասում են, որ այդ գոր-
ծին վերաբերեալ լաւագոյն խորհրդածու-
թիւնները և ծրագիրները օրինական ըն-
թացք կը ստանան:

Կրթական գործը շոշափում է բազմա-
թիւ մարդկանց շահագրգռութիւնը: Նա
միտմամբ կը զբաղեցնում է թէ՛ կրթվող
սերունդի ներկայացուցիչներին և թէ՛ նրանց
բազմաթիւ շրջապատողներին՝ ծնողներին,
եղբայրներին, քոյրերին, ազգականներին և
մերձակոյններին: Նա, վերջապէս, մի մեծ
հասարակական խնդիր է, որ ինքն ըստ
ինքնան հիմնական զեր է խաղում պետու-
թեան կեանքում և ժողովրդի զարգացման
ընդարձակ հարցում:

Ինչպէս բարենորոգել կրթական գործը:
Ի՞նչ կազմակերպութիւն տալ զանազան
կարգի դպրոցներին: Ի՞նչ ուղղութեան հե-
տևել: Ի՞նչ ձևով մշակել ընթերցանի ծրա-
գիրները: Ահա մի շարք հարցեր, որոնք
հանդէս են եկել ժողովրդական լուսաւո-
րութեան և հասարակութեան առաջ:

Մի բան բաւականաչափ պարզվել է
ներկայումս, որ այդպիսի խոշոր գործի
հիմնական բարեփոխութեան հարցի մէջ

չը պէտք է սահմանափակվել միայն մաս-
նագէտների կարծիքները լսելով, այլ պէտք
է իմանալ նաև գիտնական և հասարակա-
կան հիմնարկութիւնների խորհրդածու-
թիւնները, որոնք իրանց փորձառութեամբ
և գիտողութիւններով կարող են նպաս-
տել կարեւոր խնդրի կատարեալ մշակու-
թեան:

Ուրախութեամբ կարող ենք հաղորդել,
որ նոյն իսկ պահպանողական մամուլի
շրջանում, ինչպէս, օրինակ, «Новое Время»
լրագրում, որոշ կերպով ընդգծված է հա-
սարակական և գիտնական հիմնարկու-
թիւնների մասնակցութեան անհրաժեշ-
տութիւնը կրթական հարցերի մշակու-
թեան գործում: Մանկավարժութեան
ներկայացուցիչները, որքան և ցանկանա-
լին ինքնուրոյն կերպով վերաբերվել գոր-
ծին, այնուամենայնիւ. անկարող են աղատ
մնալ այն նախապաշարմունքներից, որոնց
նրանք ընտելացել են իրանց գործունէու-
թեան մէջ: Կողմնակի անձանց աջակցու-
թիւնը կը լրացնէ թերութիւնները և այդ-
պիսով կարողութիւն կը տալ պետութեան
առաջ դրած մեծ խնդիրը մշակելու բազ-
մակողմանի կերպով և կատարեալ լըջու-
թեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Շատ անգամ ենք առիթ ունեցել այս էջե-
րում մերկայանալու, թէ որքան վայրկերայ, ան-
հիշատ, յաճախ ծիւղողի փաստեր են ներկա-
յանում առաւ լրագրները իրանց ընթերցող-
ներին, երբ հարկաւոր է լինում հազարից մի
անգամ մի որ և է բան սակ իրականաւոր ազ-
գերի, նրանց անցնելու և ներկայի մասին:
Մեր գանգաւորները զլիաւորապէս մայրաքա-
ղաքների ուսումնական ղեկ էին. բայց
եղել են դէպքեր, երբ պակաս ապացուցիչ չէ

եղել և տեղական, Թիֆլիսի ուսումնական
վերաբերմունքը դէպք մի այնպիսի լուրջ հարց,
որպիսին է տեղացիների պատմութիւնը, նիստ
ու կացը արձանագրելու Այսպիսի յատկութիւն
ունի «Новое Обозрение» լրագրի վերջին հա-
մարում տպված մի թղթակցութիւն, որ գրված
է երեւանից, Յայտնի է, որ անցեալ տարվա
նից Վաղարշապատում ինչի վարդապետը
պեղումներ սկսեց և բաց արեց Չուրթնոց
Լուսաւորչի եկեղեցին: Այդ հնագիտական գիւ-
տի մասին շատ բան գրվեց, մինչև իսկ աւելի
չափ, քան արժէք. փակագծի մէջ պարտք ենք
համարում նկատել, որ այդ եկեղեցին լրագ-
րութեան մէջ արգէն ընկալման քննադու-
թիւն է ստացել: Թիֆլիսի ուսումնական թղթ-
ակիցը նոյն այդ գիւտի մասին է տեղեկու-
թիւններ տալիս: Բայց որպիսի հրաշալի ճըշ-
տութիւններ են պարունակում նրա ասածնե-
րը: Խաչիկ վարդապետը անուանված է «ВЕР-
ХОВЫЙ АРХИМАНДРИТЪ» (երևի ճապարակոյն
վարդապետ) բառերի թարգմանութիւնն է):
Բանից դուրս է գալիս, որ հայերը ունեցել են
ներքէս թագաւոր, այն էլ երբոր ներքէս
թագաւոր (երկու տեղ կրկնված է այս թագա-
ւորը բառը): Եւ ահա ինչ զարմանալի բան
է եղել այդ ներքէս թագաւորը. նա IV դա-
րում չին է այդ եկեղեցին, շուրջ յետոյ տե-
ղափոխվեցին Թիւրքիայից (Թիւրքիա—չորրորդ
դարում...): Գրիգորի մատուցածները, մի բան,
որ կարող էր տեղի ունենալ, մոտաւորապէս
ասած, IV դարի քառասնական թվականներին
(այս ժամանակագրութիւնը հօ միանգամայն
զարմանալի է): Չարմանալի գիւտ է և և այն,
որ Մովսէս Կաղանկատուացի VII դարի հեղի-
նակ էր. աւելի զարմանալի այն է, որ Գրի-
գոր Լուսաւորչի ճարտարները վերցրված է Ման-
այրից և այդ Մանն գտնվում է Թիւրքիայի
էրզրումի քաղաքի մօտ:—Չուրթնոց եկեղե-
ցու մէջ գտնված սեպագիր արձանագրութեան
թարգմանութիւնն էլ է դնում թղթակցից չա-
կերտների մէջ. և բանից դուրս է գալիս, որ
Ուրա թագաւորը գրել է, թէ ինքը զո՞հ էր
բերում ճայն ժամանակվայ հաւատարմութիւն
(աստուածութիւններին):

մարտ աչքերը բաց դառն մէջով նայում են
հերոսի նկարին դէմքին:

Երբ Չանիմիրսկին հարցական հայեացքով
խոր գլուխ տուեց կոյսին, սրան թուաց, թէ
սառը, դաժան իրականութիւնը զարթեցնում
է իրան մի քաղցր ու ջերմ քնից:

Այդպէս, բոլորովին այդպէս էր երեւակայում
նա այդ մարդուն,—գոհ ինքն իրանից և ամ-
բողջ աշխարհից, բոլորովին անձնատուր աշ-
խարհային գործերին, ոտից մինչև գլուխ
դրոյմված աշխարհիկ նրբաձեւութեան և անձ-
նավարձութեան կիւրքով: Հաստիւ միջակ էր,
ճակատը, ջահէլ մարդու պէս, կոկոխի զարթոն-
քաւորացած, մուգ աչքերը փայլում էին զօ-
րեղ ու սրբաշունչ կերպով, չրթունքները
ժպտում էին ուրախութիւնից, որովայնքան լին-
էր, երևի, նրա սիրտը, որ դժուար էր զգալի, չը
թողնել, որ արտայայտվի: Նուրբ և կանոնա-
ւոր զիմագծերը բոլորականում էին ներքեւում,
կարճ խուզած միտքի տակին, գոհութեան
և մարմնական առողջութեան տեսք տալով
նրա դէմքին: Գոյր կարայի երեւակայութեան
առաջ ակամայից պատկերացաւ այն հալ ու
մաշ եղած կինը, որ վաղածամ մեռնում էր
հիւանդանոցի մահճում հոգեկան և մարմնա-
կան տառապանքների մէջ: Որքան տարբերու-
թիւն: Միասին ապրել սկսած երկու հոգու-
այժմ, կեանքի կիսաճանապարհին, մէկը այն
աստիճան անբաղդ է, իսկ միւսը՝ այսքան եր-
ջանիկ: Երկու մեղաւորներից... որովհետեւ,
անկասկած, մեղքի մի մասը սրա վրա է ծան-
րանում... միայն սա է, որ իր կեանքի յաղ-
թիւնը ցնծութեան մէջ չէ զգում իր ուսերին
այդ անաւեսանի բեռը:

Չանիմիրսկիի դէմքը, ճիշդ որ, պարծաւ էր:
Նա ինչ շատ զբաղված էր. նրա գլուխը
լինէր էր մտածմունքներով և շատ գործեր էին

Այսքանը պ. թղթակցի հնագիտական և
պատմագիտական կուրիոզներից: Բայց մեզ
թուում է, որ նա իր սեփական գիտերը չէ
գրել, այլ ուղղակի գոհ է դարձել այն թե-
լադրութիւններից, որոնք նրա գիտութեան
ամբողջ պաշարն են կազմում: Եւ իրաւ, ինքե-
նացու և կաղանկատուացու պատմութիւն-
ներից վկայութիւն բերող (ցոյց են տուած
գլուխներն անգամ) մարդը չէր կարող այդքան
կոպիտ սխալներ գործել. նա լսել է մի թելադ-
րութիւն, բայց լսել չէ լսել, չիթել է, իստ-
նել ամեն ինչ: Ահա այդ թելադրողին էլ մենք
կը կամենայինք երկու խօսք ասել: Ձանազան
պատմագիտներից բերած վկայութիւններով նա
ճգտում է ապացուցանել, թէ եկեղեցին չին-
ված է եղել ինչ կուստան տեղը և թէ այդտեղ
գրված են Գրիգոր Լուսաւորչի ստորագրութիւն
տարակուսական, շատ գծուար ապացուցա-
նելի բան է դա, մանաւանդ երբ հաստատու-
թիւնը IX դարի հեղինակ Յովհաննէս (ըստ
թղթակցի—Ուննէս) կաթողիկոսն է: Եթէ
ենթադրութիւնները ներկի են հնագիտու-
թեան ճիշդութեան, կան այնպիսի ենթադրու-
թիւններ, որոնց վերաբերմամբ պէտք է չա-
փազանց զգոյշ լինել և յամենայն դէպս չը
տարածել կոտորների վրա, հրապարակու-
թեան: Ահա ինչու ենք այսպէս խօսում: Խա-
չիկ վարդապետը գտել է աւերակների տակ
մի քանի ոսկորներ և հրատարակել է դրանց
Գրիգոր Լուսաւորչի մատուցածները «Վաչկի»
թղթակցից անցեալ տարի հաղորդել էր, թէ ինչ
հետեւանք է ունեցել այդ ենթադրական եզրու-
մեր, առանց այդ էլ շատ անպաշտ և դուրա-
հաւան ժողովրդի համար. ահագին բազմու-
թեամբ մարդիկ են հնացել նոր գտած մա-
տուցների երկրպագելու: Այժմ առաւ լրագրի
թղթակցին էլ հաւատացնում է, թէ այդ ոսկոր-
ները Լուսաւորչի մատուցածներն են: Էջմիածինը,
որի քթի տակ է կատարվում այդ բոլոր, լուս-
թիւն է պահպանում կամ այն պատճառով, որ
ուրախ է մի նոր ուխտատեղի էլ աւակայնելով
իր դատարկ անուկին: Նիւթ տալու համար,
կամ այն պատճառով, որ այնտեղ չափազանց
դժուար բան է այդ ենթադրութիւնները

սպասում նրան,—այդ հնչող էր գուշակել այն
անգամից ժողովրդի մեջ, որ երեւում էր
նրա աչքերում, և այն շտապ շարժումներից,
որով նա քրքրում էր գրասեղանի վրայի դար-
սած թղթերը և ինչ որ գրում մատրտով մի
առանձին թերթի վրա: Վերջը, նա դարձաւ
դէպի հիւրը և ձեռքի սիրալիք շարժումով
ցոյց տուեց գրասեղանի մօտ դրած երկու հան-
դիպակաց բազմաթիւներից մէկը: Այդ գողտրիկ
շարժումով մեկնված սպիտակ ձեռքը նորից
խեչեցրեց քոյր կարայի այն մեղմաւորի ձեռ-
քերը, որոնց վրա նա այնքան երկար նայում
էր այդ գիշեր: Թող զօրավիշ լինի իրան Աս-
տուած: Նա Աստուծու անունով պէտք է խօ-
սի այդ մարդու հետ, որ այդքան սպառափելի
կերպով տարբերվում է թէ իրանից, թէ այն
թշուառ կնոջից:

—Ես լսում եմ ձեզ, քոյրիկ: Ի՞նչ ծառայու-
թիւն կարող եմ մատուցանել:

Գոյր կարայի բարակ չրթունքները չէին
դողում, երբ նա արտասանեց.

—Ես գալիս եմ այն կնոջ մահվան մահճի
մօտից, որին դուք տէր և հաւատարմութիւն
էք ուխտել Աստուծու սուրբ սեղանի առաջ:
Ձեր ամուսինը, Լուսաւոր Չանիմիրսկին վախ-
ճանվում է մեր հիւանդանոցում և ես, ի սէր
Քրիստոսի և ի կատարումն նրա պատուի-
րանների, եկել եմ հաղորդելու ձեզ նրա վեր-
ջին խօսքերը և վերջին ցանկութիւնները:

Նրա ձայնը հնչում էր այնպիսի հոգու ան-
վերքութեամբ, որ խօսում է յանուն գերա-
դոյն օրէնքի, ուստի և երկիւղ չէ կրում ո-
չնչից: Նա պատրաստվել էր լսելու. առկու-
թեան ազդեցիկ, տեսնելու արձանագրութիւն
պարանք, նոյն իսկ տեսնելու կոպիտ շարժում
կամ խօսք: Այդպիսի անսխալութիւններ
դէմ, որոնք սպասելի էին այդ անկասկած կա-
մակոր և սխալակ մարդու կողմից, երբ նա

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԱՆԱԶԱՆ ԺԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՑ

Ն Ո Ր Ա Վ Է Ս

ԷԼԻԳԱ ՕԺԵԿՈՅԻ

(Շարունակութիւն *)

Նախասնեակում նրանք նորից սկսում են
խօսել իսկ քոյր կարայի, մինչ այդ, բաց մնա-
ցած դռան միջով նայում է հիւրասնեակի
խորքը, որտեղից նրա վրա դարձեալ փչում է
ինչ որ անակնկալ շունչ:

Հիւրասնեակի խորքում պատերի վրա կախ
են տուած մեծ ու փոքր շրջանակներ, որոնց
միջից երեւում են դէմքեր, զարդեր և նշան-
ներ: Հին կնիքներից հրաշալի ներքեւում
արտանկարված պատկերների, մանրանկարնե-
րի, էմալների հաւաքածու է այդ Պատի մէջ-
տեղում կախ է տուած ամենամեծ նկարը, որ
ներկայացնում է մի հրաշալի դէմքով առ-
պետ, որ ձին հեծած նետովում է էլստերի
փրփրաղէկ աղիքների մէջ իր հրամանատա-
րութեան տակ գտնվող զօրքի հետ միասին:
Այդ դրամատիկական տեսարանից վերեւ գտն-
վում է մի արքայական դէմք, որ իր պուդ-
րոտած կեղծամբ տակից նայում է ներքեւ
խոնդիկ ժպիտով խոնդիկ սրտի, որ անընդու-
նակ է զգալ որ և է դրամա:

Մանրանկարների միջից հեռուից գոյնզգոյն
են տալիս նախապագների և նախատառերի
զգեսանները, մի կողմը դրված փոքրիկ սեղանի
վրայից խրոխտաբար նայում է հին սաքսօնեան
խաճապակիից շինված մի սպիտակափառ զին-
ուոր... իսկ քոյր կարայի գգում է, որ այդ բո-

քի մէջ թողնելով մասնաժողովի անդամներին իսկապէս ինչի եկաւ եւ ինչի գնացիւ Բայց ինչ-քան էլ գաղտնիքի հետ լինի կապված նրա գալն ու գնալը, բայց այսքանը գոնէ պարզ է եւ այդ ի պատիւ արժ. Եարախանցի պէտք է յայտնել, որ մոմի հաշիւները քննութեան մէջ նա ըստ ամենայնի համակարծիք էր մասնա-ժողովի գտած տարբերութիւնները վերաբեր-մամբ, բայց մի կէտից, այն է պակասած ան-վառ մոմի քանակութեան հաշիւը: Մեր ասա-ծի ձեռնարկները ապացուցանում է եւ նրա տուած պաշտօնական զեկույցումը վիճակային կօնստիտուցիային (Թէեւ պէտք է ասել, որ միայն կողմնակի կերպով աջողկեց մեզ այդ բանը տեսնել), որի մէջ նա մասնաժողովի վե-րաբերմամբ լուծական նպատակաւ կարծիք է յայտնում. խոստովանելով նրա անդամների եռանդը եւ բազմաթիւ փաստեր ձեռք բերելը, բայց մի եւ նոյն ժամանակ կաշկանդված գըտ-նելով իրան մասնաժողովի կողմից, եւ տես-նելով, որ իր նախագահական կէս ձայնի ա-ռաւելութիւնով չը պիտի կարողանայ խեղդել նրանց միացած 12 ձայնը, առաջարկում է վի-ճակային ատեանին՝ փոխանակ նախագահի ու-ղարկել հոգեւորական լիազօր քննիչ...

(Նը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԵՈՒՇՈՒԾ

Ապրիլի 6-ին

Նոր ընտրված քաղաքային ձայնաւորները հէնց առաջին քայլից ցոյց տուին, որ այնքան էլ չը պիտի մտածեն քաղաքի շահերի համար, այլ քաղաքի շահերը ծառայելուն միմայն ի-րանց կարիքին առաջ տանելու համար: Մշա-կի» ընթերցողներին յայտնել է, թէ ինչ աղ-մուկներով ընտրութիւններ կայացան եւ թէ ինչպէս թուրքերը, քաղաքագլխի աջակցու-թեամբ, աշխատում էին բռնութեամբ հայ եւ թուրք ձայնաւորներին թիւը հաւասարեցնել: Այդ բանը, ի հարկէ, չաջողվեց, որովհետեւ վարչութեան անդամ Մարգարեանց չը համա-ձայնվեց քաղաքագլխի կարծիքի հետ եւ իր առանձին կարծիքը յայտնեց նահանգապետին, թէ քաղաքագլուխը ոչ թէ օրէնքի հիման վրա է դնելով անհաշիւ հայ եւ թուրք ձայնաւորների թիւը հաւասարեցնել, այլ բռնութեամբ եւ օ-րէնքի իմաստը միանգամայն չը հասկանալով: Պ. Նահանգապետը հաւանութիւն է տալիս Մարգարեանի կարծիքին եւ հաստատում է 24 հայ եւ 14 թուրք ձայնաւորներին: Այդ, ի հարկէ, դուր չէ գալիս քաղաքագլխին եւ թուրք ձայնաւորներին, դրա համար առաջին ժողովում նոր ձայնաւորները միանում են քաղաքագլխի բարեկամ հայ ձայնաւորներին մի քանիսի հետ եւ ուղարկում անդամ են ընտ-րում պ. Քալանթարովին 2 ձայնի առաւելու-թեամբ, իսկ Մարգարեանն չէ ընտրվում: Այս-պիսով թուրք ձայնաւորները մոծակի խայթո-ցով վրէժ են առնում իրանց օգտին չը ծառա-յողից եւ զբաղվող ցոյց են տալիս, որ այսու-հետեւ դուժման իրանց նպատակների, իրանց ձգտումների առարկէզ պիտի լինի:

Մինչեւ այժմ մեր դուժմայից մի շօշափելի օ-գուտ չենք տեսել, սրանից յետոյ սպասելի էլ չէ: Հօգաբարձական ընտրութիւններին ժամա-նակ հայերը ցոյց տուին իրանց չորրեքը, միթէ հայերը կարող են որ եւ է ժամանակ աջող ընտրութիւն անել, քանի որ նրանք գնահա-տում են շատախօսներին, ճառախօսներին եւ ոչ թէ առանց աղմուկի դործ տեսողին. Բէ-նիկ վարդապետը ամեն մի ննչեցեղի վրա դաժմանական է կարգում, որքան բառացի պաշար ունի բոլորը դուրս է թափում եւ ժո-ղովորդն ապշած ասում է՝ «Բէնչ լաւ տեսուչ է: Ինչ մի խելօք գործ կարելի է օգտակել մեր այդ Եապրեանից»...

Մեր քաղաքի նորութիւններից մէկն էլ ընկալական դպրոցի շինութեան հարցն է: Ժո-ղովորդը օպաստում է, որ երկու տարուց յետոյ ընկալական դպրոցի շինութիւնը պատրաստ կը լինի: Բայց բանից երեւում է, որ հազիւ թէ 10 տարուց յետոյ պատրաստ լինի, որովհետեւ կապալաւորուեւ ուղղում է առանց փողի գործ կատարած լինել: Երեսնութեան կոմիտէն դիմել է պ. Առաքելեանին, թէ կապալաւորուեւ յետ է կանգնում իր խոստումին, ինչպէս վարվի նրա հետ—պայմանի համաձայն, թէ ոչ: Առաքելե-անն պատասխանել է թէ պայմանի համաձայն վարվեցէ՛ք: Ուրեմն կօմիտէտի անդամների վրա պարտք է մնում գտնել մի նոր կապալաւոր, որը բարեխղճութեամբ վերաբերվի գործին: Նրկու տարվայ ընթացքում Բազում անգամից պալատ են շինում, կանգնեցնում, իսկ Շու-շում չեն կարողանում 5 տարվայ ընթացքում

մի տուն կառուցանել: մի տարի անցել է, դեռ հիմքի կէտը չեն վերջացրել: Ձէ՛ թշուառ չէ Շուշին իր գործիչներով...

R.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Ինչպէս յայտնի է, այս ապրիլի 30-ին լրա-նում է ձիւղ երեսուն տարի այն օրից, երբ առաջին անգամ բնի դուրս բերվեց պ. Սուր-դուկեանցի «Պէպօ» կամուրջին, նախկին քա-ղաքային թատրոնում, ներկայ Թամաշօյներին քաղաքապետին: Այդ պատճառով թատե-րաւէրների մի փոքրիկ շրջան, թատրոնական խմբի անդամների հետ միասին, կամենալով տօնել այդ նշանաւոր օրը, հրաւիրում է պ. Գ. Չմկեանին յանձն առնել իր վաթսուհա-մեայ հասակում կատարել նոյն Պէպօի դե-րը, որ կատարել է առաջին անգամ իր երի-տասնարդութեան ժամանակ: «Պէպօ» հետ կը խաղացվի նոյն թաղմանը հեղինակի նոր խմբագրած «Գիշերվան» սարքը խէր է» կա-տակարգութիւնը:

Ներքալթի, ապրիլի 10-ին, ինժեներներ Կ. Պատիսեան եւ Բրայովսկի ներկայացրին Թիֆ-լիսի քաղաքային վարչութեան մի նոր յա-տարարութիւն Սօյալիսի սարի միջով տանելի փողով: Եւ երեքտական երկաթուղու կամ ձիաքարի գիծ շինելու մասին ներանանան հրապարակեց Վերամիջոցակայա փողոցով մին-չեւ Բոտանիքական այգին եւ այնտեղից Դա-բախանայ գետակին ալ ափով ու բաղանիւնների փողոցով մինչեւ քաղաքի զուտը: Ձեռ-նարկողները առաջարկում են քաղաքին իրանց հաշուով փողով տանելը, շինել երկաթեայ կա-մուրջ Դաբախանայ գետակի վրա եւ երե-տական երկաթուղային գիծ: Ամբողջ գծով անցնելու վճարը ամեն մի հոգուց լինելու է 6 կօպէկ: Ձեռնարկողները միջնորդում են, որ քաղաքը տայ իրանց այդ արտօնութիւնը 40 տարով, որից յետոյ ամբողջ ձեռնարկու-թիւնը կը մնայ յօդուտ քաղաքի:

Մեզ հազորդում են, որ կուկիայի Նորաչէն ս. Աստուածածին եկեղեցու համար նոր երեց-փոխ ընտրելու օրը նշանակված է առաջիկայ կիրակի օրը: Այժմեան երեցփոխի ընտրութեան ժամանակը լրացել էր արդէն նոյեմբերի վեր-ջին: Ցանկալի է, որ այժմ նշանակված ընտ-րութիւնները, ծիսականների անհոգութեան պատճառով, չը յետաձգէին եւ նորից խօսակ-ցութեան առիթներ չը ներկայանային:

«Россия» լրագիրը հազորդում է, որ այս ամ-սի վերջը ներքին գործերի մինիստրութեան առանձին խորհրդակցութեան մէջ վերջնակա-նապէս կը քննվի զէմսովի հիմնարկութիւննե-րը մոցնելու նախագիծը գեմսովի չուսնեցող բո-լոր նահանգներում:

Մայրաքաղաքի լրագիրների խօսքով, նահան-գապետներին իրաւունք է տուած բոլոր միջնոր-դութիւնները տեղական նշանակութիւն ունեցող երկաթուղիներ եւ օժանդակ ճանապարհներ շինելու մասին յարգել կամ մերժել անձնական իշխանութեամբ, առանց դիմելու կենտրոնա-կան հաստատութիւններին:

Ուսումնարանական վարչութիւնը մտադրու-թիւն ունի ամենակարճ ժամանակում քննու-թեան ենթարկել բնական գիտութիւնների, մաթեմատիկայի եւ նոր լեզուների դաստաու-թեան ծրագրի հարցը ընկալական դպրոցնե-րում: Բացի դրանից քննութեան կենթարկվի եւ դաստաուութեան պրօգրամը իդական գիմ-նագիտներում, որը մտադրութիւն կայ արմա-տականապէս փոփոխել:

Հրամայված է Յարիցին քաղաքը դասել այն տեղերի թւում, ուր արգելվում է ապրել եւ մնալ զատառասանական վիճիւնների համաձայն ու-տիկանութեան հսկողութեան տակ եղող ան-ձանց:

Ներքին գործերի մինիստրութիւնը, լրագրի-րների ասելով, սկսում է մշակել գիւղական ըն-տանիքները բաժանելու վերաբերեալ օրէնքը:

1897 թւի յուլիսին Պետերբուրգի ազնուա-կանութեան ինքնակալութեան գանձապահ Պրիժիլէկին, մօտ 150 հազար ռուբլի յափ-տակելով ազնուականութեան խնամակալու-թեան զբաղմունքից, փախաւ: Այդ յանցանքի պատճառը մասամբ այն կարգերն էին, որ զո-

յութիւն ունէին՝ ազնուականութեան խնամա-կալութեան մէջ եւ ահա դրա համար էլ քննու-թիւն կատարվեց այդ ինքնակալութեան ան-դամների գործունէութեան վերաբերմամբ: Այս օրերս կայացաւ կառավարչական սենատի որո-շումը՝ դատի ենթարկել նախկին նախագահ, Պետերբուրգի ազնուականութեան պարագլխի պաշտօնակատար իշխան Լվովին եւ ինքնակա-լութեան նախագահներին սենեկապետ Բօ-գիսկօին եւ կրօնգէլմին, բաւարար հսկողու-թիւն չունենալու համար իրանց ստորագրեալ-ների վրա: Գործը կը քննվի մինչեւ ներկայ տարվայ ամառային արձակուրդները:

Ռուս-գերմանական առեւտրական ֆերէնը, որի վարչութիւնը գտնվում է Բերլինում, մայ-րաքաղաքի լրագիրների խօսքով, թոյլտու-թիւն է խնդրում ներքին գործերի եւ ֆինանս-ների մինիստրութիւններից հիմնել իր բաժան-մունքները Պետերբուրգում, Մօսկվայում, Օ-դեսայում եւ ուրիշ քաղաքներում. Բաժան-մունքների բացման նպատակն է, ինչպէս աս-ված է խնդրի մէջ, «փոխադարձապէս դի-րացնել գերմանական վաճառականութեան յա-րաբերութիւնները ռուսականին հետ»:

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ հետագրում են, որ հայ դերասանական խումբը այնտեղից ուղար-կել է մեր ծերունաբարդ դրամատուրգ Գաբ-րիէլ Սուրդուկեանցին հետեւելու հետագիրը. «Հայ դերասանական ընկերութիւնը հանդիսա-ւոր կերպով տօնելով այսօր ձեր անձնի նը-կախութեան, «Պէպօ» երեսնամեակը, մա-տուցանում է պատկերի հեղինակին իր անկեղծ շնորհաւորութիւնները: Թող պահպանէ Աս-տուած ձեր ոյժերը յօդուտ եւ յուրախութիւն հայ բնիկ Սիրանոյշ, Արաքսեան, Յարութիւ-նեան, Վրոյր, Աղայեան, Անգրանիկ, Կարի-նեանց»:

ԵՈՒՇՈՒԾ մեզ գրում են. «Կիրակի, ապրիլի 8-ին, պատարագից յետոյ ս. Յակոբի մա-սունքները դուրս բերեցին քաղաքային պար-տէզը: Այնտեղ թափոր կատարեցին երկնքից անձրեւ հայցելու՝ երաշխից փառաբանող արտերի համար: Թափորի կատարման ներկայ էր Գառ-նակեան եպիսկոպոսը: Ժողովրդի մեծ բազ-մութիւն կար: Բայց եւ այնպէս երաշտը իր աւերմունքները չարունակում է»:

ՍՏԱՎՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Մարտի 31-ին, երկուշաբթի, Ստավրօպոլի հայ հասարա-կութիւնը հայոց ուսումնարանի դահլիճում պատրաստել էր թաթախման սեղան հայ գիւն-ւորներին հիւրասիրելու համար»:

ՇՆՈՂ գիւղից (Բօրչալուի գաւառ) մեզ գը-րում են. «Մեր գիւղացիներն անցեալ տարվայ անբերրութիւնից յուսահատված, զարնան սկզբներում տեսնելով հողերը նորաբոյս ար-տերով զարգացված, անհանձն ուրախու-թեամբ սպասում էին այս տարի հացի առա-տութեան: Բայց երաշտութեան եւ սաստիկ շոգերի պատճառով արտերը թառամել են եւ դաշտերում խոտը բոլորովին չորացել է: Եթէ երաշտը երկարի, այս տարի սովը անխուսա-վելի է մեղանում: Շնորհիւ Բօրչալուի պ. դա-ւառապետի ձեռք առած խիտ միջոցների եւ մեր տանուտէրի եռանդուն ջանքերի, մեր գիւղում գոգութիւնները վերացած կարելի է համարել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Սարա» լրագրի ասելով՝ կովկասեան մահէղականների զաղթականութիւնը գէպի թիւրքիս շարունակվում է առանց ընդհատվե-լու: «Սարա»-ի թղթակիցը նորերում այնչեղ է 400 հոգու Կ. Պօլս հասած զաղթականնե-րից, մանրամասնաբար հարց ու փոխ է արել նրանց մահնեղականների վիճակի ու կացու-թեան մասին կովկասում եւ այն պատճառների մասին, որոնցից զրգոված նրանց հազար խմբ-բերով զաղթում են գէպի թիւրքիս: Գաղթա-կանների մեծամասնութիւնն այն կարծիքը յայտնեց, որ թէեւ մահնեղականները կովկա-սում լաւ են ապրում եւ ուստաց կառավարու-թիւնը ոչ մի խտրութիւն չէ գնում նրանց ու ճիշտութեանը մէջ, այնուամենայնիւ կրօնա-կան զգացմունքը ձգում է նրանց գէպի թիւր-քիս, «որի բարգաւաճման եւ ուժեղացման մասին այժմեան փաղիչահի օրով նրանք շա-րունակ տեղեկութիւններ են ստանում: Թիւր-քիս այնչեղներից, Մեկկայից Կ. Պօլսի վրայով վերադարձող հայիկներից նրանք միշտ լուծմ են, որ փաղիչահի արքունիքը համարեալ բա-ցառապէս կազմված է կովկասեան ծագումն

ունեցող փաշաներից եւ բէյերից: Հայիկները անձամբ տեսել ու խօսել են այդ փաշաների հետ. նրանց միջոցով փաղիչահի ուղարկում է ուխտաւոր հայիկներին իր գարեհնարը: Նոյն իսկ Մեկկայում եւ Մեղրիսում գլխաւոր կա-ռավարիչները չէրքէզներ, լեզգիներ եւ կովկա-սեան թաթարներ են: Այս բոլորը նկատի առ-նելով՝ կովկասեան մահնեղականների մէջ ան-զուսպ ցանկութիւն է ծնում հազորակից անկ իրանց որդոյը թիւրքիսի մահնեղական-ների կեանքին եւ կրթիւ նրանց որպէս ուղղա-հաւատ փաղիչահի հաւատարմի հպատակներ»:

—«Munchener Allgemeine Zeitung» լրագրին գրում են թէ՛հայից, թէ՛ առանցքը, ըստ երե-ւոյթի, այ կա չեն կամենում երկաթուղային գիծ շինել Բաղուից դէպի Ատաւր: Եւ ինչի ձուլ-ֆայից դէպի Թարիք եւ Կազուին: Այդ գծով Թիֆլիսի պօստային տրակտը կը կապվի Բէշա-թարիք-Թէհրանի պօստային տրակտի հետ: Թղթակցի կարծիքով, երկաթուղային ձեռնար-կութիւնները Պարսկաստանում չեն խոստանում տալու առանձին օգուտներ, որովհետեւ պար-սիկները ասում են նորմութիւնները եւ յամառութեամբ հետեւում են հնութեան ա-ւանդներին»:

—«Новое Время» լրագրին. «Ֆերմանական գահաժառանգի այցե-լութիւնը աւարական մայրաքաղաքին նշա-նաւոր հանդիսացաւ այն մի քանի հետաքը-րական փաստերով, որոնք գրաւեցին ընդհա-նուրի ուշադրութիւնը: Գահաժառանգը ներկայ եղաւ պալատական պարահանդէսին ոչ աւա-րական համագրեւորով, որպէս վայել էր, այլ ունգարական համագրեւորով: Նա առանձին ու-շադրութիւն էր դարձնում իշխանուհի Էլիզա-բետի, հանգուցեայ Էրչէնցոյի Բուգոֆի դստեր վրա եւ երկ կայսերութեան հոգեւ չին արիս-տոկրատ կոմս Գարրալիի ծոռ»:

—«Daily Mail» լրագրին հազորդում են Բեռ-լինից, թէ Լէյպցիգում բժիշկները գործադու-ն են արել: Բանն այն է, որ վաղուց Գերմանիա-յում կազմվել են «Krankenkassen» անուանված ընկերակցութիւններ, որոնց անդամները վար-ձում են սեփական բժիշկներ եւ վճարում նրանց չափն վարձատրութիւն ամեն մի այցե-լութեան համար: Վերջին ժամանակ այդ տե-սակ ընկերակցութիւնները թիւն են քաղա-քացի է, որ մի քանի բժիշկներ ստիպված են բաւականապէ 7 պէնէնգով (3 1/2 կօպէկ) իւ-րաքանչիւր այցելութիւնից: Ահա այս անդա-կան կարգի դէմ են բողոքում այժմ Լէյպցիգի բժիշկները:

—«Daily Express»-ին հազորդում են Շանգ-հայից. «Ձինալան արքունիքը սաստիկ ան-հանգստանում է այն լուրերի պատճառով, որոնցով հազորվում էր, թէ Գանսու մահ-մեղականները պատրաստու-թիւններ են տեա-նում բաժանվելու Ձինաստանից եւ կազմելու առանձին անկախ պետութիւն: Բացի դրանից Ուրգայի ասորիանաւորները հազորվել են կայա-րին, թէ դալայ-լաման յայտնել է իրան ապա-տամբ մոնղոլների պարագլուխ Դեռ մարտ ամսից մոնղոլական ապստամբ զեղերը տեսել են իրանց պատերազմական պատրաստութիւն-ները»:

ՄԵԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՄԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Վօլգա-Կաման առեւտրա-կան բանկի ընդհանուր ժողովում հաստատվեց 1900 թւի հաշիւը: Զուտ արդիւնքը 3,636,080 ռուբլի է: Կանոնադրութեան պահանջած գու-մարները հանելուց յետոյ, չահաբաժին է նշա-նակված 2,840,000 ռուբլի, 71 ռուբլի ամեն մի բաժնետոմսին: Մնացած 17,409 ռուբլին մտցրած է 1901 թւի չահաբաժնի մէջ: Պա-հետի գումարը հասնում է 4,316,143 ռուբլու. պահետի չահաբաժինը՝ 2,322,630 ռուբլու, անչարժ կայքի շիջուցման դրամադուրը՝ 656,391 ռուբլու, ընդամենը 7,296,164 ռուբլի: ԼՈՒՂՈՆ: Կիտչէնէր հեռագրում է Պրէտո-րիայից, թէ հարաւ-արեւմտեան կամակար-39 րօտա այսօր ճանապարհ ընկան գէպի հայ-րենիք, այսինքն հրաման ստացան գնալ ծովա-փը, որպէս զի նաւը նստեւ:

ԲՕՄԲԵ: Այսօր այստեղ հասաւ մի չոգե-նաւ գերի բօէրներով:

ԼՈՒՂՈՆ: Ստանդերտօնից հազորդում են, թէ բօէրների զլիաւոր հրամանատարի ամուսնիւր, տիկին Բօտա նոր վերադարձաւ իր մարդու մօտից եւ մեծ յոյս է տածում, թէ աջողու-թեամբ կը պսակվեն այն ջանքերը, որ ինքը գործ է դնում խաղաղութիւն վերանստաու-լու համար: Նա այժմ ճանապարհ ընկաւ գէպի Պրէտորիա, որպէս զի տեղեկութիւն տայ Կիտ-չէնէրին իր ամուսնու մօտ արած այցելու-թեան մասին:

ՊԵՐՏԻ: Անգլիայի, Ֆրանսիայի, Միացեալ-Նահանգների, Հօլլանդիայի, Բելգիայի եւ Լատ-վիայի դեսպանները, որոնց նախնական քննու-

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27